

ՀԱՅԱՍՏԱՆ

Գ Է Պ Ի Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն .

Գէպի՛ Հայաստան, գէպի՛ Հայաստան — ահա՛ այն կոչական խօսքը, որ այժմ աւելի՛ քան ժամանակայարմար ենք համարում՝ դարձնալ յիշեցնել Հայ երիտասարդութեան։ Գէպի՛ Հայաստան — ահա՛ այն որբացած ու թշուաժայրը, գէպ ու՛ր շտապով իր քայլերը պէտք է ուղղէ Հայ երիտասարդութիւնը։ Գէպի՛ Հայաստան — ահա՛ այն երկիրը, որի հանրակեցութեան բոլոր կարգերի արմատական յեղաշրջման պահանջն իրագործել նպատակով համար կոչված է Հայ երիտասարդութիւնը։

Իբրեւ խուլ որոտ, որ նախագուշակութիւն է փոթորկի, լսվում է Հայ ժողովրդի խուլ տրտունջը Հայաստանում։

Լքված — նա այլ ևս անկարող է շարունակելու կրել իր ներկայ հանրակեցութեան կերպերը։ Վիրաւոր — իր վէրքերի սպիզանին նա տեսնում է ազատութեան ու իր զարգացման ձգտումներում։ Յուսահատ — նա կոչում է գէպի իրեն առաջնորդ ընկերներ, որոնք կարողանան նպատակայարմար միջոցներով նրա քայլերն ուղղել գէպի մեծ նպատակը։

Այո՛, այո՛, իբրեւ քչլած հոգմով, գնալով, կուտակվում են փոթորկի սև ամպերը Հայաստանի վրայ, — իբրի ընթացքի զօրութեամբ հանրային մարտի վճռական րօպէն մտնում է։

Արդ, ո՞ր են այն պիտանի առաջնորդները, որոնց ներկայութիւնը Հայաստանում դարձել է անհրաժեշտութիւն, որոնք ձեռք գտնէին հարկաւոր պատրաստութիւններին այն օրհասական մարտի համար, որ մղվելու վրայ է ընդգէմ թիրք կառավարութեան՝ յանուն թիւք քահայ ազգային անկախութեան, յանուն նրա քաղաքական ազատութիւնների և տնտեսական զարգացման։

Ո՞ր են այն ինտելիգենտ ղեկավարները, որոնք ժողովրդի մէջ, ժողովրդի հետ, ժողովրդի համար — յանուն բանող ժողովրդային շահերի սկսելն մեծ գործի անհրաժեշտ պատրաստութիւնները։ Ո՞ր են Հայ առաջագէմ, ողջամիտ երիտասարդ տարրերը։

Ճիշտ է, մենք սխալված կրինք, եթէ ասենք թէ

ամենքը գտնվում են Հայաստանից դուրս, բայց կայ Հայ երիտասարդութեան մէջ մի մեծամասնութիւն, կենդանի ոյժեր, որ այդ զբոսական մէջն են։ Նրանք օտար երկիրներում գեւ սլարասլվում են անճանի ու ետական անձնախարութեամբ՝ թէ զուցէ Եւրօպան «ազատէ» (°°) հային իր թշուաժ վիճակից։ Չուրի քաղաքացիական համարձակութիւնից ու արժանաւորութիւնից, նրանք գեւ խորում են Հայ բանող ժողովրդից, մինչդեռ այդ ժողովուրդը նրանց կանչում է։ Նրանք գեւ իրենց օտար են համարում ժողովրդին, մինչդեռ իսկապէս նրա հետ նրանք կապված են ընդհանուր սերտ ինտէրեսներով։ Նրանք իրենց ընթացքով ստեղծել են ահապին վիճիւրենց և բանող ժողովրդի մէջ, մինչդեռ այդ վիճը ոչնչացնելու համար նրանց ոչինչ չէ մնում, եթէ միայն անկեղծ արձագանք գտնել իրենց սրտերում այն մարդերի — իրենց նմանների — կոչական ձայնի, որոնք բաւական անկեղծութիւն են ունեցել անցնելու այն վիճը։ Այո՛, ձայնը հնչում է Հայաստանից, անկեղծ, պարզ, սրտագին ձայն, որի ներկայութիւնը Հայաստանում աւետիս է նոր օրվայ արշալոյսի ծագման։

Գէպի՛ Հայաստան, — վերջին մի քանի նշանաւոր երեոյթներէից յետոյ միայն այդ խօսքով այսօր մենք կարող ենք, ուզում ենք, պարտաւոր ենք գիմել Հայ երիտասարդ առաջագէմ, յեղափոխական տարրերին, որոնք գտնվում են մարտագաւտից դուրս։ Գէպի՛ Հայաստան, — այնտեղ բանող ժողովուրդը, այնտեղ ձեռք նմանները, ձեռք ընկերները սպասում են ձեռք, կոչում են գէպ իրենց, գործն օտար երկիրներում չէ՛, գործը Հայաստանումն է և միմիայն Հայաստանում։

Բայց պատրաստվելով ճանապարհ ընկնել գալցէ տարակուսանքով հարցնէ Հայ երիտասարդութիւնը — ի՞նչ անել այնտեղ յեղափոխութեան համար, ինչից սկսել «Հնչակի» ամենաւեական աշխատութիւններից մէկն է եղել միշտ այդ կէտը և նրա համարներում անպակաս կերպով կան այդ հարցին պատասխաններ։

Յեղափոխական ոյժերի գերն այժմ երկրի մէջ կայանում է հետեւեալում, — սեննալով յեղափոխութեան նպատակների ու միջոցների գրական ու պարզորոշ

ծրագիր, միանալ միմեանց, կազմել մի մարմին և բանող ժողովրդից կազմել մէկ ընդարձակ յեղափոխական կազմակերպութիւն, միաժամանակ միջոցներ սրտնետլ կուտակցութեան ամեն կարգի — մարզերի, գրամական, մարտիկ և այլն — նիւթեր ձեռք բերելու համար:

Բանող ժողովուրդ — զաւ է յեղափոխութեան յայտը, մղիչը, ոյժը. զաւ է յեղափոխութեան մեծ ու հաւատարիմ զօրագունը, որի ոյժերը զարգացնելու ու կազմակերպելու համար կոչված է յեղափոխական հասուն երիտասարդութիւնը:

Բնդարձակ, լայնածաւալ գործունէութիւն, որ առաջացրել են հայութեան ներկայ պատմական բազէն և հայ ժողովրդի հանրակեցութեան ներկայ պայմանները Հայաստանում: Մի գործունէութիւն, որ յայտնվում է հայութեան ներկայ հասարակական գործունէութիւններից ամենաէականը և որը սպասում է միայն շատ ու անձնուրաց գործիչներ իր ասպարիզում:

Գործը սկսվել է նա ալէտք է շարունակվել և աւարտատանայ հայ բանող ժողովրդի ձգտումների յաղթանակով, հակառակ ամեն արգելքների, Հակառակ գէպքում, պատասխանատվութիւնը հայ ապագայ սերունդների, պատմութեան ու մարդկութեան առջև իր ամբողջ ծանրութեամբ ընկնում է հայ այժմեան սերնդի վրայ:

Ուրեմն, թող նա լրացնէ իր պարտականութիւնը, թող նա զանվէ իր մեծ կոչման բարձրութեան վրայ:

Գէպի Հայաստան . . .

„ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ“ ՀԱՅԱՍՏԱՆԻՅ .

Ներքե զետեղված „Յայտարարութիւնը“ սրանից երկու երեք ամիս առաջ խմբագրութեանս մէջ առաջվել է թիւրքաց Հայաստանի մի քաղաքից: Մի՞թէ պէտք կայ ասելու, որ այդ երկուքը ինքն ըստ ինքեան բերկրաւթ լինելով հանգերձ, շատ տեսակէտերից նշանաւոր է ևս: Ստալին անգամն է, որ հայ յեղափոխականները համարձակ, վճռական ձայնով ու իրենց բարձր կոչման գիտակցութեամբ՝ գլուխ են բարձրացնում և իրենց գոյութիւնն իմաց տալիս այնպիսի մի երկրում, որտեղ լացելն իսկ տէրութեան կողմից նկատվում է իբրև յանցանք: Ստալին անգամն է, որ նոյն իսկ գործունէութեան բուն ասպարիզում երեան է գալիս մի կազմակերպված ոյժ, որ աւելի ու աւելի ընդարձակելով իր ծաւալը, վերածելով կենդանի խօսքը կենդանի գործի, ձգտում ու աշխատում է առաջացնել նպատակայարմար յեղափոխութիւն այն երկրում, որի մասին շատերն

իրենց համար բան ու գործ են արել հեռուից մեծ մեծ գոռալ ու ֆրաղներ շաղ տալ թողած նրան սրբ, թշուառ ու անապաշտպան: Ստալին անգամն է, որ Հայաստանում հիմբ է գնվում յեղափոխական սուրբ գործի, տալով նրան որոշ սխտէմականութիւն ու ուղղութիւն, և ոչ թէ բազէական բորբոքման ազդեցութեան ներքոյ, որ ինչպէս պատահական, նոյնպէս և անցողական է, ոչ թէ անձրագիր, առանց ուղղութեան, մթութեան մէջ խաբխախելով, այլ կանխամտածած, կշռված ու խորհված նախագծով և որոշ ու գրական զաղափարներով են սկսվում գործադրվել յեղափոխութիւն անելու պատրաստութիւնները: Վերջապէս առաջին անգամն է, որ աղաւ ձայնը, աղաւ խօսքը, աղաւ գործը, հինգ հարիւր տարի ստրկութիւնից յետոյ, գտնում են իրենց անձնուրաց կարապետներին նոյն իսկ երկրի մէջ, շնայած այն հակայական ու զժուարայաղթ արգելքներին, հարածներին, որ յեղափոխական արդար գործի մասն ու բաժինն են:

Հայ հասարակութեան առանձին լուրջ ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ „Յայտարարութեան“ վերջին կէտի վրայ մանաւանդ, որ միանգամայն բնաւոր ու նշանաւոր է: Դա այն կէտն է, որ „Յայտարարութիւնը“ խմբագրողները թուում կան նաև բանող ժողովրդի զաւակներ, նրա կարգերից գուրս եկած մարդիկ: Այո՛, այո՛, նրանք հայ բանող ժողովրդի կարգերիցն են և զաւ ապացոյց է թէ՛ յեղափոխական ոգին ժողովրդի մէջ հասունացել է: Եւ հայ բանող ժողովրդի զաւակները միանում են կենդանի ու նպատակայարմար ծրագրով երկրի մէջ գործունէութիւն, և նրանց ոյժերը համախմբելով ու կազմակերպելով, ձգտում են երեան գալ իբրև յեղափոխական հզօր կուսակցութիւն, որ գործում է յանուն հայ բանող ժողովրդային, հետեւապէս և հայութեան, շահերի:

Մեր բոլոր ատածների հիման վրայ՝ հայ հասարակութեան վերաբերութիւնը գէպ այդ „Յայտարարութիւն“ կազմող խումբը պարզ է թէ ինչպէս պէտք է լինի Հասարակութեան բոլոր անկեղծ ու հայութեան վերաբերութիւնը փափագող անդամները միշտ պէտք է իրենց ոյժերով նպաստեն ու ամակցեն յեղափոխական գործը նախաձեռնող այն կուսակցութեան, որ արդէն գործում է նոյն իսկ բուն ասպարիզում և կենդանի բարրաւոր հետ միասին տնի նաև կենդանի ու նպատակայարմար գործունէութիւն, նուիրած իրեն հայ ժողովրդին ազատութեան ու բարօրութեան հասցնելու փնտ ու սուրբ նպատակին:

Կեցցէ՛ յեղափոխութիւն:

Կեցցէ՛ հայ բանող ժողովուրդ:

Կեցցէ՛ գործող խումբ:

Խմբ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Այսօր հայ յեղափոխական գործող խումբը իր ձայնը կը բարձրացնէ բուն Հայաստանի հողէն և կը դիմէ իր բոլոր թէ՛ գաղթական և թէ՛ հայրենաբնակ ազգակիցներուն և կը հրաւիրէ զանոնք եղբայրական ձեռք կարկառել խմբիս:

Հայրենակիցներ, նկարագրել ձեզ այն բոլոր օրինաւոր և ապօրինի հարստահարութիւնները, ճշդ մեկը, բարբարոսութիւնները, հալածանքները, որոց տակ կը տանջուի ամեն օր Հայաստանի բուն ժողովուրդը առճիկ կառավարութեան տակ — աւելորդ կը սեպենք, վստահի ամենայն օր հարկւորաւոր այդպիսի դէպքեր կը տեսնենք, կը լսենք ու կը կարգար:

Հայ ժողովրդի վիճակը անտանելի է:

Մեր ժողովրդի այդ անկեղծելի վիճակը և անոր տնտեսականապէս և քաղաքականապէս կրած ճշդումները բունապիտ առճիկ կառավարութեանէն՝ ստիպեցին զմեզ պատերազմի ելնել այդ կոշտ, բիրտ ու անգամայն կառավարութեան դէմ, պատերազմ՝ յանուն արդարութեան և ճշմարտութեան, յանուն հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական ազատութեան և հաւասարութեան:

Անշուշտ այս պատերազմը շատ դժուար պիտի ըլլայ և մեծ զոհեր պիտի պահանջէ մեզմէ, բայց մենք հաւատացած ենք որ յաղթութիւնը մերը պիտի ըլլայ, վստահի զա ժողովրդային գիտակցական պատերազմ է:

Խումբս յեղափոխութեան յաջողութեան ամենազխտաւոր սրայմաններէն մէկը կը համարի բոլոր յեղափոխական խմբերուն խիստ կարգապահութեան մը տակ կանոնաւոր կազմակերպութիւնը. այս պատճառաւ անհրաժեշտ կը սեպենք բոլոր ցրուած հայ յեղափոխական ոյժերուն միացումը մէկ ընդհանուր, պարզ և որոշ ծրագրով մը: Էւ ահա այն յայտարարութեամբ մենք կը դիմենք այդ ցրուած հայ յեղափոխական ոյժերուն և կը հրաւիրենք զանոնք միանալ մեզ հետ համերաշխութեամբ գործելու համար:

Ըստ մեր ծրագրին՝ ընկերութեանս զխառնոր նպատակ է՝ ձեռք բերել հայ ժողովրդի համար տնտեսական և քաղաքական լիակատար ազատութիւն, ամեն մի աշխատող վայելէ իր աշխատանքի արդիւնքը ընդհանուր հաւասարութեամբ և կատարեալ ազատութեամբ:

Այս նպատակին համար, համար, յեղափոխական ընկերութիւնս անհրաժեշտ կը գտնի Հայաստանի համար ստեղծել մի աշխարհի անկախ կառավարչական կերպ, որոյ շնորհիւ ընկերութիւնս օրինական կերպով կարող

ըլլայ հասնել իւր նպատակին, կառավարչական այդպիսի կերպ ըսելով՝ ընկերութիւնս կը հասկանայ ժողովրդային կառավարութիւն մը ընդհանուր ժողովրդեան քուէարկութեան սկզբունքին վրայ հիմնուած:

Մի այդպիսի կառավարութիւն գոյացնելու համար միակ միջոց՝ ընկերութիւնս կընդունի հայ ժողովրդային յեղափոխութիւն մը, որոյ համար անհրաժեշտ կը համարի կանոնաւոր կազմակերպութիւն բոլոր յեղափոխական խմբերու մէջ:

Յեղափոխութիւն ծագեցնելու իրր ամենազխտաւոր միջոցներ կընդունինք. — 1) փրօփականտ (տարածումն ընկերութեանս նպատակներու), 2) ամբիթաթիւն (զբաւումն հանրային մտաց ընդդէմ կառավարութեան), 3) թէրթոր (տարափնեցնել գործիս վնասակար անձնաւորութիւնները):

Յեղափոխութեան գործը լինելով բոլոր հայերուս գոյութեան միակ միջոցը և շատ բազմակողմանի, ամեն մի հայ, ո՛ր դատակարարի ալ պատկանելու ըլլայ, կարող է և պարտաւոր է անոր մէջ մասնակցութիւն ունենալ: Միայն պէտք է այդ համար անձնուիրութիւն և հատառտ կամք: Մենք համոզուած ենք որ հայ երիտասարդութեան մէջ քիչ չեն այդ երկու յատկութիւններով օժտուածները և լիայոյս ենք որ մեր այս օրուայ ձայնը արծազանք պիտի գանձ շտակու սրաին մէջ:

Հայ յեղափոխութեան գործի յաջողութեան համար անհրաժեշտ են և նիւթական միջոցներ, որոց համար մենք կը դիմենք բարեկեցիկ հայերուն և կը խնդրենք նոցա նիւթական օժանդակութիւնը (Բարեկեցիկ հայը, որ բոլորովին ալ աղատ չէ սամկին քաջած տոտապանքներէն ու հարստահարութիւններէն, թո՛ղ չվստահանայ այսօրուայ իւր մասնաւոր աստիճով դրութեան և թո՛ղ քաջ դիմեայ որ իւր կեանքն ու գոյութիւնը կապուած է բուն հայրենի հողին վերայ շարաշար տանջող ժողովրդի գոյութեան հետ ու եղբայրական ձեռք մեկնէ այդ ժողովրդեան ազատութեան գործին:

Մենք դիմեցինք հայ երիտասարդութեան և հարուստ գասակարգին, մի կողմ՝ թողելով հայութեան ամենազխտաւոր տարրը՝ երկրագործ ու արհեստաւոր գասակարգիւր: Այս, անոնց չդիմեցինք, որովհետեւ անոնք արդէն մեզի հետ են:

Նոցա թշուառ կեանքն է, որ մեզ ծնաւ:

Մենք արդէն անոնցմէ ենք և անոնց մէջ կը գտնուինք ու միասին կաշխատենք և պիտի աշխատենք մինչեւ ի մահ:

Հայ-յեղափ. գործող խումբ:

1890 թ. փետրուար 10:

Հայաստանի № 13 քաղաք:

Յ. Գ. Յայանի պատճառներով մեր խնկական հասցէն

անկարող ենք տալ, ուստի մեզ հետ յարաբերութեան մէջ մտնել կամ գրառական օգնութիւն ուղարկել ուղղակիորէն կը խնդրենք զիմեյ «Հնչակի» հասցէով»

ՄԱՐԿԵ ՈՒ ԿԵԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ.

Մէջ գաւառի, Բուշնեղի, Մանազկերտ, Աւազկերտ, Խնուս, Սատուն գաւառների մէջ, յայտնի է, հայ ժողովուրդը ընդհանրապէս կապարապէ երկրագործութեամբ և անասնապահութեամբ, բնականաբար բացի քաղաքներէ, յոկրի գլխաւոր բերքերն են ցորեն, գարի, կորեկ, ճերմակ պղի, որ շատ տաատ է և սե գլխի, ամեն տեղ կան բրինձ, բամբակ, խաղող և գանազան տեսակ պտղատու բուսեր, ինչպէս խնձորենի, տանձենի և այլն, և այլն խատորայսերէ նշանաւորն են ձմերուկ, սեխ, վարունգ, կաղամբ, գետնախնձոր և ուրիշներ։ Սիրիկի ընթերցող, մի հող որ կրնայ այսքան բարեբներ պարգեւել իրեն մշակողին, հազաւ ինչո՞ւ հայ ժողովրդի անտեսական փրճակը ծայրայեղ նեղութեան ու չքատուութեան է հասած։ Եթէ գորա պատճառը հարցնելու լինիս, գիտացին քեզ կապտաւարանէ յուսահատութեամբ հետեւեալը. «Անբաւ հուքմաթը, աւազակ քիւրդը, ազաճ կալաւածաւէրը և կեղեքիչ փախառուն շէն թողոր որ ևս սիրելի հողիս հաւալ արդիւնքը վայելիմ, կիւլն, կիւլն ամենը, ինձ կթողուն միայն սե գլխի և հում թթուն. կարելի՞ լան է անդոնցով բնտանիք կերակրել, մտնոց առնել և գիշեր-ցորեկ աշխատել» Իսկ եթէ ցանկանաս փոքր-ինչ նստել գիւղացու քով և գրգռել նորա ինքնասիրութիւնը, այն ժամանակ միայն իր սրտի ցաւերը կթափի քո առջև, հայհայելով թիւրք կառավարութիւնը և հայ հողերսական ախաւորեալ դատակարարը, վարդապետ կոչված փեղարաւորները, որք կկեղեքեն ժողովուրդը և կծծեն նորա արիւնը, ամենատարր միջոցներ ձեռք առնելով, իրենց պաշտպան ու զիմակ ունենալով սե փեղարը։

Մի քանի օրինակ առաջ բերեմ թէ ինչպէս կառավարութիւնը կկեղեքէ խեղճ ժողովրդեան։

Թիւրքաց Հայաստանի ամեն կողմեր հողի արդիւնաբերութեան տատանորդ պիտի փնտրել կառավարութեան Այդ տատանորդը կժողովին հետեւեալ միջոցով։

Ամեն մէկ գաւառի գաւառապետ իր պաշտօնականների հետ միատեղ որոշեալ օրերը ժողովք կգումարեն իրենց գաւառի մէջ գտնված գիւղերը վաճառելու քաղաքի մէջ գտնված հարուստ մարդոց, հարկաւ տաճիկներին կվերապահվի գիւղ գնելու արտօնութիւնը, թէև հայերն ալ իրատուք ունին։ Արաւս գի իրենց գլխաւոր չափաւոր տեսն ամեն մէկ գիւղին մէջ առանձնապէս տաճանորդ ժողովիւրդ և փոխանակ իրենք երեք-չորս հազար մարդու հետ գործ ունենալու, գաւառապետն և նորա պաշտօն

ւաները, գործերը թիթեացնելու համար, քանի մի մարդոց հետ միայն գործ կաւնենան, աղաները կգումարեն, կսկսի հաշիւը, նախ մի գիւղի վաճառքը Գաւառապետ փաշան կյայտնէ գիւղի գինը, բերքերը զտարաւ բանելով թէ՛ այս գիւղը պտղաբեր է, միւսը հարուստ է արտերով, թէ նորա գնողը կօգտուի և կվաւորակէ և այլն այդպիսի շատ քաւ, ստեղծ ստացող զոգարանութիւններ կանէ գիւղերին նկատմամբ, որպէս զի աղաները միմեանց հետ մրցելով աւելացնեն այս կամ այն գիւղի գինը և այլն։ Եթէ երբեմն երբեմն (շատ տակաւ) պատահին տեղի բարեխիղճ աղաներ հայերէ, նոքա կխոստանան տալ որոշեալ գինը, եթէ միայն գիւղն արժէ, այսինքն՝ եթէ միայն գիւղի արդիւնաբերութեան համեմատ լինի գինը. իսկ տաճիկ աղաներն առանց գիտնալու թէ նշանակեալ գնի համեմատ արդիւնք կրնան քողել գիւղէն, թէ ոչ, կաւելացնեն գինը, քաջ խմանալով որ մէկի փոխարէն կրնան տաան առնել, իրենց կոնակն ունենալով լիւր ու հարստահարիչ կառավարութիւն մը։ Այդ գէպերին հայերն ըստ մեծի մասին ճարահատեալ, մրցելու անկարող յետ կքաւոլին և գիւղը կմնայ տաճիկն, նա կգաւնայ այդ գիւղին կատարեալ տէրը։

Այդ գիւղ աւնողը, այդ մուլթեղիմը, առանձնորդ իրաւունք ունի առնելու գիւղական ամեն տեսակ արդիւնաբերութիւններէ, հողէ, հացաբոյսէ, ամեն տեսակ այգիներէ, մինչև իսկ պտղատու ծառերէ և այլն, բացի ոչխարէ, որ կվերապահուի կառավարութեան. սորա մասին կխօսենք իր տեղը։ Մեր ինքնագոհ մուլթեղիմը փառասիրապէս ձին հեծած, մի քանի փոքրաւորներ ալ ետեէն, կգիմէ իր անմեղ զոհերի բնակավայրը, վաղորդ իր մոքին մէջ որոշելով թէ քանի հայ գեղկուհիներ իր գաղանային կրից զոճ պիտի լինին, քանի խեղճերի տուն պէտք է հիմնայատակ անէ և քանի հարստութիւն գիղէ։ Գիւղացիներն իրենց ռեսի (գիւղապետի) առաջնորդութեամբ կգիմաւորեն՝ ողջունելու իրենց սիրելի աղային և կառաջնորդին նորան ռեսի օգան։ Անմիջապէս սեղան կպարտաւորուի անկոչ հիւրին համար և ռեսի կինը պարտաւոր է ճոխացնել սեղանը գիւղին մէջ գտնուած ամենապատուական կերակուրներով. իսկ եթէ չգտաւ ամեն հարկ պահանջածը, ծանր պատառնանաւորութեան ներքոյ կիյնայ։ Սեղանին մասնակից լինել կարժանանան միայն ռեսի և քահանան, այն ալ եթէ մեր մուլթեղիմ աղան ինաւունք չորհէ։

Գիւղացու թէև պարտականութիւնը չէ կերակրել մուլթեղիմին, բայց ինչ անէ. ամենքը յաջորդաբար պէտք է սեղան բանան նորան և այն ալ եթէ «վատ» կերակուր լինի, յետ կգարձնէ և եթէ ուրիշ «վատ» չեկաւ փոխարէնը, տատակ կգանակոծվի թէ՛ ինքը և թէ՛ կինը, նա ինչ անէ. փարա չունի, որ հաւ, իւղ, հաւկիթ և այլն գնէ, կամ թէ չէ որոշն բողբոջ թէ իր պարտքը չէ ամենին կերակրել մուլթեղիմին և նորա արքանեակներին։ Կերթայ առաջնորդարան՝ կուղարկուէ հուքմաթ. այնտեղ ալ ազէկ մը կծեծուի և ապա կերթայ գիւղ իր սե ու անխնայ օրը լալու։

Հարկ է ասել, որ մուլթէզիմը գիւղ կերթայ միայն այն ժամանակ, երբ արդէն հունձը վերջացած է և գիւղացին իր գաղտային բոլոր հացարդոյսերը հաւաքած է իր կալը: Երբ կալը կսկսեն, մուլթէզիմն աշայուրջ կերպով գիւղը ցորեկ կհսկէ այն, որպէս զի գոգութիւն չլինի, թէև այդ բոլորովն չի պատահիր, որովհետև մեր ժողովուրդն իրեն չըջապատող զրացի օտար ցեղերէ բարոյապէս չառ բարձր է: Գիւղացին կշտապէ հանել ասաջին կալը, քանի որ տանը հաց չկայ և երկխայքն անօթի են: Յոյսն ասաջին կալի վրայ է, որ հանի, տանի ջրաղաց և այնուհետև յատկացնէ իր ընտանեկան գործածութեան: Բայց աւա՜ղ, որու համար նա շտապեց և ո՞վ տարաւ: Տարան մուլթէզիմը և մերիբազին, իսկ գիւղացու մանկան նմաց կրկին անօթի: Նա կաշխատէ երկրորդ կալը հանել, բայց զորանէ ալ նորա բաժին չի հասնիր. մի մասը կտանի շարչին, միւս մասը մեր արժանապատիւ վարդապետները և վերջին մասն ալ քաղաքի աղաները: Պարտաւորեալ չորս կողմէ հարստաւ հարեալ անօգնական գիւղացին երրորդ կալին մէջ այլ ևս ցորեան չի ծնծեր, այլ սե գլգլը որպէս զի ոչ ոք օխորժ չունենայ վերցնել տանելու: Զո՛ւր հաշիւ ստկայն. ազոր ալ մեծ մասը քիւրդ աղան կաննէ և իրեն գիւղացուն հազիւ շատ կարճ ժամանակի մը համար պաշար կմնայ: Հարց կուգայ այժմ՝ քանի՞ կալ պիտի նա հանէր իր ամբողջ տարուան արդիւնքէ, որպէս զի իր սպորուստը սակաւիկ մ'ապահովէր. և ժողանալու չէ բնաւ այն, որ գիւղին մէջ շատ քիչ տուն կայ, որ երեք կալէն աւելի կրնայ ծնծեր:

Աւելի պարզ տարացուցելու համար թէ գիւղացին, հողագործը իւր աշխատութեան տէրը չէ, վերցնենք գիւղի մէջ ամենաշատ հաց վերցնող գիւղացին և տեսնենք թէ ուր կերթայ նորա քրտինքի վատտակը: Մկրաւ գոմ՝ գիւղի մէջ եւ ծանօթ եմ մէկ ընտանիքի որ բաղկացած է 15 անդամէ՝ երեք եղբայր իրենց ընտանիքով: Իրենց արտերէն կվերցնեն ամենաքիչը 50 քիւա տեղային հացահատիկներ, բայց՝ կաշիւրէն վերջը իրենց հաղիւ կմնայ 15 քիւա գլգլ, որով հազիւ կրնան իրենց մի կերպ պահպանել, մինչև նոր հաց դուրս գալուն: Հապա ո՛ւր կերթայ այնչափը: Ես ականատես եղած եմ՝ ինչպէս կիւլեն նոցանէ այդ ամենը: Մի քանի կալ արդէն հանած՝ ցորեանները մուլթէզիմը չէր շափած, այլ կալը կնքած ժողուած կմնայ: Սակայն ինչո՞ւ ամէն մը վեր հանած կալը մուլթէզիմը չը շափէր: Որովհետև նա թշնամի է, շափելը կբաւքէ, որ կալի կէտը այդ ժամանակամիջոցին մէջ կլլէ և այնուհետև շափէ: Կշաջողէ մուլթէզիմին, որ մի ամուռայ ընթացքին մէջ հինգ անգամ՝ գիւղը ատեն ծածուկ դէզը կիւլէ և յետոյ կամբաստանէ կալի տիրոջ թէ նա ցորեան է գողցած և չորս հինգ անգամ նորանէ տուգանք կանէ: Գիւղացին լաւ կհասկնայ, որ դա իրեն՝ մուլթէզիմին ըրածն է, բայց որո՞ւ բողբէ: Պատմեմ մի դէպք, որ պատահեցաւ այդ ժամանակ այդ մուլթէզիմին: Որոշուեցաւ գիւղացու տան մէջ գիւղերները երկու հոգի երթան կալին մօտ և

ծածուկ հսկին այն: Այդպէս ալ արին: Երկու գիւղեր ոչ ոք չերկաց: Երրորդ գիւղերը, մինչդեռ մեր աղաք ծածուկ կհսկէին, մթութեան մէջ յանկարծ երեցան երկու մարդկային ստուէր. մուլթէզիմը և իր որդին էին նոքա: Հայրը քիչ մը հեռու կանգ առաւ, իսկ տղուն ճանրեց որ դէզը վրի՛ Նորա վիւղը և մեր աղաքներու յարձակուիլն նորա վրայ մէկ եղաւ: Հարուածներ տեղացին թշտառականի մէջքին, որ դառն ախ քաշելով, երկայնացաւ գէգի վրայ: Չայներու և աղմուկին վրայ հաւաքուեցան տանցիները և զրացիները և ամենուն պարզ եղաւ դէգ վիւղու մութ երեոյթի աղբիւրները: Մուլթէզիմը իր որդուն կոռուի գաշտին մէջ մենակ թողած և շատոնց վախած էր: Երկրորդ օրը, այդ անցքը ամենուն յայտնի դառնալով, մուլթէզիմէն պահանջեցին կարիւր շափէ, եթէ ոչ, ունենալով այդ փաստը, կերթան հուքմաթին կրող, քեն նորա դէմ: Մուլթէզիմի արհամարհական ու լսիրճ ծիծաղը եղաւ դորա պատասխան. — որո՞ն կերթան գանգալու: Հուքմաթին... հապա չէ՞ մի հուքմաթին ինքը մուլթէզիմն է: Այստեղ ամենայնիւ հայերը բողբեցին. — անօգուտ, այլ միայն կալի չշափելն գարձեալ ամիս մը տեւեց, որու միջոցին անձրեւը մի քանի անգամ ծնծեց կալին: Իսկ թէ ահա ի՞նչ տեսարան կներկայնայ մարդու աչքին կալին շափելուն ժամանակ: Բազմաթիւ մարդիկ կտողովուն կալին մօտ. մուլթէզիմը կտանէ իր տաննորդը, քահանան, ժամկալը, գզիւրը, շարչին, վանքի նուիրակը, մերիբազին, աղան և այս ամենի վրայ աւելացուր քիւրդ աղան ալ, ամենքը կտանին իրենց «համեմակքը» և ձեռք կթողում՝ գուշակել թէ ի՞նչ կմնայ կալի տիրոջ: Եթէ ամենու ըրածը մի առ մի պատմելու լինիմ, ինձ պէտք կուգան շատ թերթեր. սակայն տեսնանք թէ ինչպէս կտանէ տասանորդը մուլթէզիմը և զորա արարքները ընտախով լինելով, միւսների ըրածի վրան ալ գողտախար կըտայ:

Արբուն.

(Կարոնակովէ.)

Թ. Ղ. Թ. Ա. Կ. Յ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.

20 Ապրիլ 1890. Կ. Պոլիս

Խորէն պատրիարք օրէ օր աւելի ու աւելի կշայրացնէ ժողովուրդը: Գործելու եղանակը չգիտնալով, պատրիարքը շատ անգամ թակարդի մէջ կիյնայ և այսպէս աղգաւ: Միտա գործեր կկատարէ. փոխանակ ժողովրդի կամքը կատարելու, կիյնայ տաճկացած հայերի գիրկը և նոցա քմահաճոյիցը համեմատ վարուելով սխալ բայեր կընէ: Դեռ վերջերս սուլթանի ծննդեան տարեկարծի առթիւ զիտողութիւն կլինի պատրիարքին որ՝ ամբողջ հայ ազգին հաւատարմութիւնն ու հնազանդութիւնն յայտնող մի գրութիւն մատուցանէ սուլթանին: Խորէն պատրիարք կհաւանի այդ առաջարկին և խմբագրուելով՝ հետեւալ օրը կերթայ անձամբ կյանձնէ սուլթանի պալատան:

պաշտօնէից: Առնցնին մի քանի օրեր և ահա սուրժանէն գրութիւն մը կգայ պատրիարքարան յայտնելով թէ շատ զոհ և շատ շնորհակալ է պատրիարքէն: Ժողովուրդը խանաղով այս ամենը, սաստիկ զայրացած, առանձին վիճադրական յայտարարութեամբ հրաւեր կկարգայ որ աւրա համարուի պատրիարքի ազգամեծա պաշտօնա վարութիւնը և միահամուռ ժողովրդային մի ցոյցով առաջադրի իւր աթոռէն: Եւ իրաւի, ինչպէս կարելի է որ վանական չորս պատերէ գուրս շեղող եպիսկոպոս մը յանկարծ գայ բազմի Կ. Պօլսոյ պատրիարքական փշաղից աթոռին վրայ, որ յատկացուցած է միայն Ներսէսներու նման մարգարէ: Լինելով վանահայր՝ Խորէնը գուցէ կարող է վանքերի յառաջագիտութեան համար աշխատել, իսկ պատրիարքական պաշտօնը իրեն համար չէ, զորիկ է պատրիարք լինելու արժանաւորութիւնէ: Հայ պատրիարք մը այժմ գիւանազէտ մը լինելու է: Խորէն պատրիարք այդ յատկութիւնը չունենալով հանդերձ, թոյլ անգարգացած ասիացի մ է և իւր գէմն եւնող առաջնոյն խօսքին անսալով կկատարէ զործ մը: Հոգ չէ որ ազգամեծա լինի, բաւական է որ գ ո թ ժ մը կատարած է. և յետոյ — յետոյ կտեսնէ որ ժողովրդեան մէջ խլրաւում մը կայ, ժողովուրդը իրեն հակառակ է: Ինքն կապէ, իսկ ժողովուրդը կզայրանայ այդպիսի մէկի մը ձեռք տեսնելով իր ճակատագիրը:

Կէպերն օրէ օր երեսն կհանն մատնիչներու ինչ գոյն լինելին: Չէր կարծուեր և երբէք չէր յուսացուեր որ պապական ճայերի մէջ ևս մատնիչներ եղած լինէին. այլ սակայն վերջերս պատահած գէպը մը ամեն ինչ պարզեց: Հայը միշտ հայ է: Բաւ չէին լուսաւորչական, թուրք և հրէայ մատնիչներու ներկայութիւնը և ահա խումբ մը պապական հայեր ևս ստանձնած են մարտնչ չութիւն արհեստը: Ի նպաստ սուրբ գործին վերնագրով նախադասութիւն երեսն երած էին Պօլսոյ մէջ. կառավարութիւնը տեղեկանալով այդ ամենէն, դոցա կեղծ լինել կտայ և յիշեալ պապական մատնիչներու միջոցաւ կը տարածէ ժողովրդեան մէջ, այն, որ կընդունի մի նախադասութիւն, հեռեկալ օր արդէն ձերբակալուած է: Թիւրք կառավարութեան այս վայրենական հնարից շնորհիւ 4.5 անձինք ձերբակալուած են մինչև այսօր և կձանադուի թէ այդ հնարքով ձերբակալութիւններն կարոտնակլին հայ սամիկ գասակարգին մէջ:

Մշակներու գաղափարական կատակերգութիւնը դեռ կարոտնակէ, տակաւին ամեն ինչ վերջացած չէ և Արալիզարի գասն է որ կտեսնուի այժմ հարցաքննիչ գա. տաւորի տուաջ: Ի հարկէ, ինչպէս իմ նախկին թղթակցութեամբս գրած էի, այս գասն ալ անկարեւոր պիտի համարուի և Մուսա բոլորովին անմեղ հաշկուելով պիտի ուղարկուի ի Մուս:

Արժանահաւատ մի անձ, իւր պաշտօնի բերմամբ օտմանեան գաղափարաց մէջ միշտ մուտ ունենալով, կարողացած է ծանօթանալ Մուսայի հետ և իմացած է անկէ թէ ինքը՝ Մուսա չուրանար իւր հարստահարութիւններն, սակայն, կըսէ Մուսա, իմ ձեռքէս գործուած չեն այդ ամենը. ես Աշխտթի ցեղապետ մ եմ և ամեն ժամանակ 3.4000 քրդեր ունիմ իմ տրամադրութեանս ներքեւ. կուտամ հրաման մը և ահա ամբողջ այդ քրդեր կը քանդեն ու կաւերեն: Իրաւ է որ Ալիի բնակներն կողպատուած են, այլ ոչ թէ ես իմ ձեռքս կողպատեցի գայն, այլ իմ մարդիկներս ըրին վրէժ մ ունէի Ալիին

և յարմար պարագային սպասելով, տուի հրաման մը և 50-60 քրդեր կողպատելով ինձ բերին ապրանքներն:

Ահա այս մտքը է խօսած Մուսա յիշեալ անձին հետ, բնականաբար մէջ պաշտօնապէս և առանձին գտնուելով խոստովանած է իւր բարբարոսութիւններն, և սակայն թուրք կառավարութիւնն է որ կուրացած է և ճշմարտութիւնը չը տեսներ: Արդեօր չը տեսներ... Մշ. շտեռնել կձեռնէ:

Ե Ի Ր Օ Պ Ա Յ Ի Կ Ե Ա Ն Ք Ի Յ.

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՄԱՆԻՖԷՍՏԱՅԻԱՆ
ՄԱՅԻՍԻ ՄԵԿԻՆ.

Մեր ընթերցողները թերեւս յիշում են „Հնչակի“ անցեալ տարւոյ երբորդ համարում զետեղված յօդուածը՝ „Եւրօպայի կեանքից“ խորագրով: Այդ յօդուածում բաւական ընդարձակ տեղեկութիւններ են արված Սօցիալիստական Միջազգային Կոնգրէսի մասին, որ կայացել էր Պարիզում աշխարհահանդիսի տարին: Ի միջի Կոնգրէսի այլ վճիռների յայտնված էր այն յօդուածում և այն վճիռը, որ մայիսի 1 ին, 1890 թ. Եւրօպայի ու Ամերիկայի բոլոր բանւորները պէտք է դադարեն բանել և պիտի անեն ընդհանուր բանւորական ցոյց, մանրֆէստացիա: Այդ ցոյցի նպատակն այն է, որ բոլոր բանւորներն այդ միջոցով վաւերացրած լինեն Կոնգրէսի բոլոր վճիռներն ընդհանրապէս և օրական ութ ժամ բանելու վճիռը մասնաւորապէս Կոնգրէսի վճիռ համեմատ նշանակված օրը, այս մայիսի 1 ին, տեղի ունեցաւ նախագծված մանրֆէստացիան, որ ընդունեց շրջառած և դեռ աշխարհում չտեսնված հսկայական ծաւար: Յոյց անող բանւորների թիւը Եւրօպայում և Ամերիկայում հասել էր մինչև 10 միլիոնի, շնչած այն բոլոր անասելի խոտութիւններին, արգելքներին, սպառնալիքներին ու մեծարմանակ զօրքերին, որ բուրժուազական կառավարութիւնները զործադրեցին ընդդէմ այդ մանրֆէստացիային ու ցոյց անողներին: Եւ հակառակ այդ բոլորի՝ բանւորական մանրֆէստացիան, իր վաւախն ու խելացի ճառերով, իր ազատաշունչ երգերով, իր ահագին կօրտէժներով (cortège), ընդհանրապէս անցաւ շատ կենդանի, յաջողակված ու համարալի կերպով և մի և նոյն ժամանակ կրում էր հսկայական, փառասուր ու յանդուգն կերպարանք: Եւրօպայում տեղ տեղ սրտահեցան արևահալ ընդհարումներ զօրքերի միջամտութեան շնորհով, որ զուրկը կորցրած կառավարութիւնները, վախեցած իրենց ու բուրժուազիայի կաշուի համար, ուղղեցին ընդդէմ բանւոր ցոյց անողներին: Այդուհանդերձ, վստահ իրենց հսկայական զօրութեան ու իրենց պահանջներին ճշմարտութեան վրայ, բանւորներն այդ օրն իրենց պահանջին մեծ արժանաւորութեամբ ու տակուսով, որ միանգամայն ապշեցրեց կառավարութիւններին և նսեմ ու տակաւն բուրժուազիայի յարգելի բուրժուազիայի զվարժ ու ապագայի վերաբերութեամբ: Կարծես այդ նշանուոր

օրը պրօլետարիատն ասում է՝ լինէր բուրժուազիան. — «Տես, ահա՛ ես, իբրեւ հօր ու ահագին զօրագունտ, քո չքեղ պաշտօններից և քո վերացած գէժքից առջև կանգնած եմ՝ պաշտօնատաճ, մերկ, պարզ ու իրուացի Ասանց իմ աշխատանքի դու չունես զոյսթիւն։ Ասանց իմ մէջն էս։ Շտապիր, օգտվիր քո ներկայ դօրութեամբ, քո առջեւ եմ ես ա՛ղէն. ձեռքի, հալածի, կտորի կտաղարար մեր կարգերը, քանի որ դեռ դու ես թագաւորում աշխարհում. խղիւղվիր մեզ քո մարկին ու ազա՛ն ծարուղ յազեցնելու համար, յուսախաբիւթով թէ այդպիսով դու կերկրվես մօտ ապագայում՝ մեր ձեռով քեզ հասնող օրհասական մահից։ Բայց խնայիր միայն, որ մեր կարգերը դու անկարող կլինես ջնջել, որովհետեւ մեր կարգերն ամբողջ բանալ մարդկութիւնից է կազմված, որովհետեւ աշխատանքն ու այժմ մենք ենք, որովհետեւ առանց մեզ աշխն՝ ես դու, որովհետեւ ապագան մերն է, աշխարհը մերն է։ Այսօր մենք դիմում ենք գործադուլի, յայտնելով քեզ լրացնել մեր այս կամ այն պահանջը. իսկ վա՛ղը — վաղը սօցիալական յեղափոխութիւնը կապիթէլ զլխից և այն ժամանակ մնա՛ն բարեւ բուրժուազիան. թագաւորութիւն և կեցցէ՛ն ու ր աշխարհը բանալ գործադուլի։»

Բայց ի՞նչ պէտք է ներկայացնէ իրենից այդ ն ուր, այդ բան ուր աշխարհը, որ ձգտում է իրաւ, կանոնների պրօլետարիատը, պրօլետարիատը, որ դուրի է ամեն սեփականութիւնից, որ վարձու բանող է, որ յայտնվում է տնտեսական ճարտ կապիտալիստ, սինտր փոքրաթիւ գտակարգի, մինչև սրա ձեռքում է կապի, տալի հետ միասին քաղաքական զեկը եւ։ Այդ նոր աշխարհն այն է, որտեղ արդիւնարեւութեան ամեն միջոցները, որպիսիներն են հողը, գործարանները, շոգե- նուրը, երկաթուղին, ճանապարհները և այլն, կլինեն ընդհանուրի հատկանիւն սեփականութիւն, հաւասարաւ պէս կալանահանեն ամենքին։ Այդտեղ իրերի գրութեան դօրութեամբ, ամեն մարդ կլինի բանող։ Ամենայն օր հաւասարապէս ամենքը կրանեն ժամերի օրը թիւ նայնպէս հաւասարապէս կտանան այդ ժամերի թիւ ու գործադրած աշխատանքի համապատասխան նիւթեր իրենց ապրուստի պահանջները լրացնելու և իրենց ամեն կերպի զարգացման համար։ Այդ տնտեսական հաստա- րութեան շնորհով դուրս թիւն չէ կարող ունենալ ո՛չ ունեւոր և ո՛չ չունեւոր. ամենքը կլինեն հաւասարաշափ բարեկեց։ Ահա՛ կարճ խօսքով այն նոր, բանոր աշխարհը, այն հասարակական կազմակերպութիւնը, որի իրագործմանը ձգտում է այժմ պրօլետարիատը։ Այդ հասարակական կազմակերպութիւնը կոչվում է սօցիալիստական։

Եւրօպական ու ամերիկական պրօլետարիատն այդ հասարակական կազմակերպութիւնն իրականացնելու համար միակ միջոց համարում է՝ ներկայ հանրակեցու- թեան արևատական յեղափոխութիւն։ Այդ յեղափոխու- թիւնն անկող համար Եւրօպայի ու Ամերիկայի ամեն երկիրների պրօլետարիատները ձգտում են միանալ միմեանց հետ և կազմել մէկ ընդհանուր միջազգային բանոր. սօ- ցիալիստ յեղափոխական կազմակերպութիւն։ Այդ կազ- մակերպութիւնն ապստամբութեան միջոցով իր ձեռքը պէտք է գցէ քաղաքական զեկը և այդպիսով գտնաւոր իր կրկնների կառավարչը՝ իր նպատակի ու նախագծի համեմատ կանօրինէ հանրակեցութեան նոր կարգեր, կհաստատէ այն նոր, բանոր աշխարհը. Հասարակական ու տնտեսական այդ նոր կարգերը հիմնված լինելով

հաւասարութեան սկզբունքների վրայ, իսպառ կվերացնեն մարդկային ամեն աղէտները և մարդկութեանը տնտեսա- պէս վարձնելով բարեկեց, նրան ամեն միջոց կտան կատարեալ ու լիակողմանի կերպով զարգանալ։

Ներկայ տնտեսական պայմաններն ու իրերի բնական ընթացքն ինքն ըստ ինքեան նպատաւոր են այդ ապագայ հանրակեցութեան իրագործման և հէնց այդ հիման վրայ պրօլետարիատի ձգտումները գրական ու ժամանակացարմաք են և անպայման կերպով պահանջում են իրենց գործադրութիւնը, որպէս մարդկային ներկայ տնտեսական յարաբերութիւններից առաջացած մէկ ան- ժխտելի անհրաժեշտութիւն։

Պարզ է, որ մենք, հայ սօցիալիստ յեղափոխականներս, իրերի թեամբ ու սրտանց համակրում ենք եւրօպական ու ամերիկական պրօլետարիատի այդ փառաւոր ու հակապական ցոյցին, քանի որ Հնչակեան Կուսակցութեան նպատակը հայութեան վերաբերութեամբ նոյնն է, ինչ և եւրօպական ու ամերիկական սօցիալիստ յեղափոխական ներկին իրենց ժողովուրդների նկատմամբ։ Բայց այն զայախարական ու բարոյական սերտ կապը, որ ունի ամեն մէկ առաջադէմ հայ քաղաքակրթված երկիրների առաջադէմ տարրերի հետ, բացի այն անկեղծ խնդակ- ցութեան զգացումը, որ ամեն մէկ առաջադէմ ու դար- զացած հայ կրում է գէպի քաղաքակրթված երկիրների սօցիալիստներ յայթանակները, յայթանակներ, որտեղ մարդկութեանը մղում են դէպ ընդհանուր առաջադիմու- թիւն, գէպ ընդհանուր զարգացում ու բարօրութիւն. բացի այն նշանուոր հանգամանքի, որ ամեն մի դարգա- ցած հայի համար քաղաքակրթված երկիրների սօցիալ- իստների նպատակը պէտք է յայտնվէ ևս նրա, զարգա- ցած հայի, նպատակը, նրա հասարակական իդէալը հայութեան մասնաւորապէս և ընդհանրապէս ամբողջ մարդկութեան վերաբերութեամբ. բացի այն, վերջապէս, որ քաղաքակրթված երկիրների սօցիալիստ յեղափոխա- կանների նպատակի իրագործումը, նրանց ձգտումների յայթութիւնը մեծապէս նպատաւոր է հայութեան մէջ նոյն նպատակի իրագործմանը և խիստ կերպով կիւ- թացնէ այդ իրագործումը. — բացի այդ բոլոր անուրա- թիւնն իսկ հայութեան առաջադէմ, զարգացած տարրե- րին թելադրում է ու նրանց վրայ պարտականութիւն գնում ձգտել սօցիալիստական կազմակերպութիւնն իրականացնել Հայաստանում և այդ նպատակի համար, կազմակերպած հայ բանող. ժողովրդային ոյժերը, հարա- զատ երկրում գործելով, լրացնել իրենց, հայ դար- զացած տարրերի, անհրաժեշտ բաժինը մարդկութեան վերածնութեան սուրբ գործի պատերազմում, այդպիսով հայութիւնն էլ հասցնելով ճշմարիտ ազատութեան, հաւասարութեան ու բարօրութեան։

Այն — ետնք .

Ժ Ո Ղ Ո Վ Ի Դ Ա Յ Ի Ն Յ Ո Ի Չ Ո Ի Մ Ն Ե Ր
Թ Ի Ի Բ Բ Ո Յ Հ Ա Տ Ա Ս Ա Ն Ո Ի Մ

Վերջին ժամիս ամենահաստատ աղբիւրից ստացանք հետեւեալ տեղեկութիւնները .

«Տրապիզոնի վիլայէթի մէջ Չարաւրա անունով

գիւղաքաղաք կայ. այդ փոքրիկ գաւառին պատկանող մարդոց բաւական ստուար խումբ մը — քաղաքացիք և գիւղացիք — ազգութեամբ հայ, թիւրք, չերքէզ և յոյն — հրաժարեցան կառավարութեան հարկ վճարելը Այդ պատճառաւ այդ «ըմբռնութիւն» ձերբակալեցին ու բանտ նետեցին: Քաղաքացի և գիւղացի ժողովուրդն այդ խմանալով, անմիջապէս կժողովէ, կազմելով 2,3 հազար բազմութիւն մը և կ'յարձակիլն բանտի վրայ: Այդտեղ կստիպեն բոլոր բանտարկեալներին ազատել և ապա կ'խմբուին այն սրահին առջև, ուր ամեն կապալաւ ունենրը գումարուած էին խորհրդի: Այդ սրահին առջև ստուար ամբիւրը հազար ու մի հայհոյանքներ ու սպառնալիքներ կ'թափէ թէ՛ կապալաւուներին և թէ՛ կառավարութեան գլխին: Սակայն վերջը մէկ երկու բարձր պաշտօնեաներ զուրա կեննեն և ամեն տեսակի տաճկական շողքորթութիւններով կ'յաջողեն հանդարտեցնել յուզուած ամբիւրը և իրենց տները ցրվել:

Երջնկայի մէջ ալ 80 հայ մերժած են հարկ վճարել, նախամեծար համարելով այդպէս յայտնել իրենց դժգոհութիւն և բանտ նստելը Հաւանական է մի քանի օրէն յետոյ նոքա արձակուին:

Գարունը սկսած է և ահա Հայաստանի ժողովուրդն ալ — գլխաւորապէս վանքիք — սկսած է ահազին երամենրով գաղթել դէպի Կ. Պօլիս: Գոյա թիւը 2,3 հազարէն կանցնէ, որոց մէջ կապտաահին երբեմնապէս քիւրդեր ալ:

Հ.Ա.Յ.Ո.Յ. Կ.Ե.Ա.Ն.Ք.Ը.

Անցեալները Մօսկվայի հայ դաղթականութիւնը Գլադատօնի ու թաւանամեայ տարեդարձի առթիւով մէկ աղերձով դիմում է նշանադր ծերունուն, խնդրելով նրանից չխնայել իր ոյժերը հայկական դատը պաշտպանելու: Շատ անգամ յայտնած լինելով մեր վճռական բացատրական վերաբերութիւնը դէպ այդ աննպատակ ուղերձներ ու խնդիրներն ընդհանրապէս, այսօր մենք չենք ուզում կրկնվել: Մենք միայն առաջ կրերենք մէկ երկու բնաւորաւ պարբերութիւն Գլադատօնի Մօսկվայի հայերին տված պատտաւանից: Գլադատօնն ասում է. «Այաւեմ որ իմ հասակս և զբաղմունք անկարող կընեն զիս հայկական դատին արդարութիւն ընելու»: Այդտեղ անգլիական պաղտութեամբ Գլադատօն խնդրում է թողնել իրեն հանգիստ, որովհետեւ ինքն ա ն կ ա ր ո ղ է: Բայց տեսնենք թէ արդարեւ հասակը նրան չէ ներում հայկական դատը պաշտպանելու, թէ նա ունի մէկ «ուրիշ գառ», մէկ ուրիշ ցաւ: Գլադատօնն ասում է. «Զիս կապուած կտեսնեմ մարդկութեան և արդարութեան ուրիշ մեծ դատի մը — իրանտական դատը... Հայաստանի բարբոթութեան ու բարենորոգման համար պէտք եղած գառին համար կյուսում որ քան զիս երիտասարդ անձանց կղիմէք»... Խեղճ Մօսկվայի հայեր և նրանց նմաններ. այդ ի՞նչ պաղ ջուր

ածեց նրանց վրայ պաղ անգլիացիներ: Նրանց դանակը քարին է գիւլել: Գլադատօնը միանգամից ընդ միշտ հրաժարվում է հայկական դատը պաշտպանելուց: Ի՞նչ պէտք է անէք այժմ, ո՞վ գիւտնագէտներ. ներշնչեցէք նրանց, ո՞վ ստուտածներ. ոյժ տվէք դարձեալ աղերսաւ թղթեր գրելու... Բայց, ախո՛ս, Գլադատօնն իր «ձեռները լուսնում» է հայկական դատից... Է՛հ, ոչինչ. միթէ քիչ են ուրիշ լորդեր... Այո՛, շատ կան. միայն օգտվեցէք Գլադատօնի տված դասից:

Պոտյոտ անենք և գանք Լյժվիսովին: Հաստատ աղբիւն, ինչ մեզ յայտնի է, որ Մակարի ամենահիշու արքանեակները դժգոհ են նրանից: «Այս Մակարը մեզ խաբեց. մենք նրան այդպէս չէինք ճանաչում, նա բոլորովին փոխվել է» — միթմրթում են նրան չըջապատողները: Իսկ Մակարը մէկ օր փառաւորապէս յայտնում է. «Աղբ թող ինձից ո՛չ մի բարօշուտիւն չսպասէ, ես աղգի ընտրվածը չեմ: Իսկ ով ինձ ընտրել է՝ նրան էլ հաւատարմութեամբ կժողացեմ»: Գրանից տնկելով, թէի ուշ, խոստովանութիւն անկարելի էր սպասել. և միթէ նրա զործերն այդ չին հաստատուում: Նրան ընտրել է ցարը և նա էլ ամենայն հաւատարմութեամբ և հլութեամբ ծառայում է նրան: Ի՞նչ մեծ աղնութիւն, բայց որ Մակարից բնուն անսպասելի չէ՛ր, ինչպէս կարծում են նրա արքանեաները:

Prenons acte.

Այնտեղ Լւերօպան է տարաւում հայերին, այստեղ Մակարն է խաբում հայերին: Այնտեղ Լւերօպան է ցոյց տալիս իր ստանաարտութիւնը դէպի հայ ժողովրդի ծանր ու սպանիչ թշուառութիւնները, այստեղ Մակարն անում նոյնը, դարձած ետեալ ծառայ հայութեան թշաւմու: Այնտեղ հայերն ուղերձների ու աղերսանքների նետերն իսկում Լւերօպայի կրճերն, որ իբրեւ ժայռ չէ ծակվում, այստեղ, թշուառութիւններից յուսահատված, հայ ժողովուրդը հաղարներով գաղթում է և յոյսը կա բաժ հայ խնտելիգեցիաից, ինքը մենակ կուում տաճիկ դէմ, առանց առաջնորդի: Այնտեղ թղթէ գնտակներ, որ խվրջոյ դոհաւնում են միայն թղթէ գնդակ նետող հայերը, այստեղ բանտ ու հրացանի գնտակ, որ տաճիկն է գործադրում հայ ժողովրդի դէմ:

Ժամանակ է վերջ տալ այդ վիճակին: Ժամանակ է երկու աչքով նայել չուրջ տիրող իրականութեան վրայ և նրա թեւադրութեան համեմատ վարվել: Վերջապէս, ժամանակ է գործելու տոկուն, լուրջ ու նպատակայարմար կերպով, միայն մե՛ր վրայ դրած հայութեան փրկութեան յոյսը՝ գործելու և միշտ գործելու:

Յօդուածներ, թղթակցութիւններ և տեղեկութիւններ ուղարկել հետեւեալ հասցեով.

Montpellier (France). — M. Beniard. Poste Restante (Nr 25) Իսկ գրամ ուղարկել.

Bale (Suisse). M. Daniel. Poste Restante.

Լօնդոն. Հայկական ազատ տպարան.